ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
2026 ***թվականի ապրիլի*** *15-****ի*** *N 594-****Ա****/2* ***հրամանի***

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ 2026-2027 **ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ** (**ԸՍՏ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ**)

«***ԴԻԶԱՅՆ***» **ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ**

«**ԳԾԱՆԿԱՐ**»

Ստուգվում են դիմորդի գիտելիքները և կարողությունները գծանկարից՝

«Նատյուրմորտ» քննական առաջադրանքի միջոցով.

Նատյուրմորտ

Պարզ երկրաչափական մարմիններից (խորանարդ, բուրգ, գլան, կոն, բազմանիստ, գունդ, պրիզմա) և կենցաղային որևէ փայլատ (փայլ չունեցող՝ կավ, մետաղ) առավելագույնը 4 իրից կազմված հորինվածք ծալքավոր կտորի ֆոնի վրա:

Պահանջվում է.

- առարկաների գրագետ կառուցում, նրանց համաչափությունների պահպանումև ծավալների ճիշտ պատկերում լույսի ու ստվերի միջոցով,
- հեռանկարի կանոնների օգնությամբ առարկաների և նրանց դիրքերի ճիշտ պատկերում տարածության մեջ,
- վերջնական մշակում, առարկաների, նյութերի տարբերակում,

նյութականության ճիշտ պատկերում (գիպս, կավ, մետաղ), ընդհանուր պատկերի ճիշտ ներկայացում:

Անհրաժեշտ նյութերը.

Առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ է A2 չափի նկարչական սպիտակ թուղթ, 50սմx70սմ չափի պլանշետ, գծագրական սև մատիտներ (օրինակ՝ H, HB, B) և ռետին:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 4 ժամ (240 րոպե), կազմակերպվում է 1 օրվա ընթացքում (ընդմիջմանը դիմորդները մնում են քննասենյակում):

ՔՆՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Գնահատումը կատարվում է 20 միավորանոց սանդղակով՝ ըստ հետևյալ բաղադրիչների

1. հորինվածքի գրագետ տեղադրում A2 թղթի չափի մեջ՝ մինչև 5 միավոր,
2. կառուցողական մոտեցում, ծավալների տարածածավալային պատկերում՝ մինչև5 միավոր,
3. ծավալների տոնային ընկալում և նյութականության ստացում՝ մինչև 5 միավոր,
4. հորինվածքի եզրափակիչ մշակում (մանրամասների ընդհանրացում)՝ մինչև 5 միավոր:

«ԿՈՄՊՈԶԻՑԻԱ»

Քննական առաջադրանքի միջոցով ստուգվում են հարթության վրա մի քանի երկրաչափական ծավալային մարմիններով կոմպոզիցիա ստեղծելու (գուաշով կամ ջրաներկով, A3 ֆորմատի թղթի վրա) դիմորդի գիտելիքները և կարողությունները:

Կոմպոզիցիա.

Երկրաչափական մարմիններով հորինվածք՝ գույների տոնային համադրությամբ: Առաջադրանքի կատարման համար վիճակահանության սկզբունքով երկրաչափական մարմիններից, ընտրվում են 5 (հինգ) երկրաչափական մարմիններ, որոնցից յուրաքանչյուրն առնվազն մեկ անգամ պարտադիր պետք է կիրառել քննական առաջադրանքում. միաժամանակ արգելվում է այլ մարմինների պատկերումը:

Պահանջվում է.

- Մի քանի երկրաչափական ծավալային մարմինների ընտրություն, միմյանց նկատմամբ համադրելիություն՝ ըստ դրանց չափերի, ծավալների և տեսակների, կառուցողական մոտեցում և կոմպոզիցիայի գրագետ տեղադրում A3 չափի թղթում,
- կոմպոզիցիոն ստեղծագործական մտքի կիրառման առկայություն,
- կոմպոզիցիոն կառուցվածքի դինամիկայի (շարժում) առկայություն,
- գունային գրագետ համադրելիության առկայություն՝ տաք և սառը գույների կոնտրաստների, տոնային ճկուն անցումների կիրառում:

Անհրաժեշտ նյութերը.

Առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ է A3 չափի նկարչական սպիտակ թուղթ, 50սմx70սմ չափի պլանշետ, մատիտներ, ռետին, քանոն, կարկին, գուաշ, ջրաներկ, ներկապնակ, վրձիններ, ջրաման, կալկա:

Կատարման ժամաքանակը.

Ընդհանուր տևողությունը 4 ժամ (240 րոպե), կազմակերպվում է 1 օրվա ընթացքում(ընդմիջմանը դիմորդները մնում են քննասենյակում):

ՔՆՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Գնահատումը կատարվում է 20 միավորանոց սանդղակով՝ ըստ հետևյալ բաղադրիչների.

1. երկրաչափական ծավալային մարմինների գրագետ համադրելիություն, կոմպոզիցիա ստեղծելու ստեղծագործական մտքի կիրառում՝ մինչև 5 միավոր,
2. երկրաչափական ծավալային մարմիններով կոմպոզիցիոն հորինվածքի դինամիկ ամբողջացում (սկիզբ, հասունացում, ավարտ)՝ մինչև 5 միավոր,
3. կոմպոզիցիոն հորիվածքում մարմինների չափերի ներդաշնակ համադրության առկայություն, գունային սահուն, հակադիր, կտրուկ անցումների տոնայնության արտացոլում՝ մինչև 5 միավոր,
4. երկրաչափական ծավալային մարմինների հստակ սահմանազատման առկայություն՝ գույների տոների միջոցով՝ մինչև 5 միավոր: